ՀԱՎԵԼՎԱԾ 3
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
16.01.2024թ. թիվ 1/18-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝
_____ Սիմոն Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Փաստաբանության մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն՝ ***ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն ըստ էության քննող և որոշում կայացնող մարմինն է:***

Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետ նաև՝ Հանձնաժողով**) կազմավորվում է չորս տարի ժամկետով՝ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրված ինը փաստաբաններից:

Փաստաբանների պալատի հանձնաժողովը՝

1) քննարկում և լուծում է փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցեր.

2) իրականացնում է «Փաստաբանության մասին» օրենքով և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2023 թվականի հունվարի 23-ին տեղի է ունեցել Հանձնաժողովի անդրանիկ նիստը:

Հանձնաժողովը 2023թ. անցկացրել է ընդհանուր 88[1] նիստ, որոնցից՝ 50 նիստ անցկացվել է համակցված հեռավար և առկա ձևաչափով, իսկ 38 նիստ՝ առկա ձևաչափով:

2023 թվականին Հանձնաժողովը քննել և դրանց արդյունքներով կայացրել է **28** որոշում, 3 գործով կայացվել է կասեցման որոշում:

2023 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից քննված և ավարտված գործերի վիճակագրություն

	Ավարտված կարգապահական վարույթները, այդ թվում՝	28
1.1	կարճված	10
1.2	պատասխանատվության ենթարկված	18

[1] 22 նիստ հրավիրվել է Հանձնաժողովի որոշման եզրափակիչ մասը հրապարակելու նպատակով:

2	Կարճված վարույթները ըստ հիմքերի, այդ թվում՝	10
2.1	կարճված փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	0
2.2	կարճված վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	6
2.3	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	2
2.4	կարճված այլ հիմքերով հարուցվածներից (ՀԼՄ, քննչական մարմին)	2

3	Պատասխանատվության ենթարկվածներ	18
3.1	փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	0
3.2	վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	11
3.3	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	3
3.4	այլ հիմքերով հարուցվածներից (ՀԼՄ, քննչական մարմին)	4

ՔՆՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ՝ 28	
Կարճված վարույթներ՝ ***10 (36%)*** ***ադ թվում՝***	***Կարգապահական փույժով ավարտված վարույթներ՝*** ***18 (64%)*** ***այդ թվում՝***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ Տաթևիկ Շալջյան

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նիստերի քարտուղար՝ Նոննա Համբարձումյան